ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

18.06.25 № ՄԳ/06.3/20229-25
Ձեր N ____________

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԳԵՎՈՐԳ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ
ՀՎՀՀ 01336677
Հասցե՝ ք. Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբ., 10շ., բն.58
Հեռ. +374 43 38 06 10
Էլ. հասցեն՝ extra.mot2024@gmail.com

Ծանուցում
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Մուրադյան,

Առողջապահության նախարարության և «Էքստրա Մոթորս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 19.12.2024թ. կնքվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/89-2» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 2,976,000 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, 03.02.2025թ. կողմերի միջև կնքված թիվ 1 Համաձայնագրով սահմանվել է, որ ապրանքը (էլեկտրական ֆունկցիոնալ մահճակալ) 10 հատ քանակով պետք է մատակարարվի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրերի ընթացքում՝ մինչև 05.03.2025թ.:

Պայմանագրի 2.1.1 կետով սահմանված է, որ գնորդը իրավունք ունի «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու

դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի», ինչպես նաև Պայմանագրի 2.1.7 կետով՝ գնորդը իրավունք ունի «Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ սահմանված է, որ պայմանագրի խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանում հանդիսացող՝ Առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի 16.06.2025թ. թիվ 92 գրությամբ (կցվում է) տեղեկացվել է, որ Ընկերության կողմից ապրանքը մինչ օրս դեռ մատակարարված չէ և առաջարկվել է միակողմանի լուծել Պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը: Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, և հիմք ընդունելով Առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի Պայմանագիրը միակողմանի լուծելու առաջարկը, Առողջապահության նախարարությունը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 19.12.2024թ. կնքված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/89-2» պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համարելով այն ամբողջովին լուծված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ

գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը իրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 370,000 (երեք հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 550,000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2025 թվականի հունիսի 27-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 370,000 (երեք հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ ՝ պայմանագրի կատարման ապահովման և 550,000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված բոլոր գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարման հանձնարարականների բնօրինակները մինչև 2025 թվականի հունիսի 27-ը ներառյալ ներկայացնել Առողջապահության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության գնումների համակարգման բաժին (209 սենյակ):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

6/18/2025

X

ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100

Կատարող՝ Համիկ Սարգսյան
ՀՀ ԱՆ ֆինանսատնտեսագիտական վարչություն
հեռ. 060-80-80-03/1804

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ
ՏՆՕՐԵՆ

"HEALTH PROJECT IMPLEMENTATION
UNIT" STATE AGENCY;
MINISTRY OF HEALTH
OF REPUBLIC
OF ARMENIA
DIRECTOR

«16» 06 2025թ.
№ 32 - ԱԾԻԳ

ՀՀ ԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՏԻԿԻՆ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գրիգորյան

ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ինֆեկցիոն մասնաշենքի հագեցման և կահավորման նպատակով կազմակերպված թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/89 գնման ընթացակարգի արդյունքում Առողջապահության նախարարության և «Էքստրա մոթորս» ՍՊԸ միջև կնքված թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/89-2 պայմանագրի համաձայն մատակարար կազմակերպությունը պարտավորվել է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում Վանաձորի բժշկական կենտրոն մատակարարել թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/89-2 պայմանագրով նախատեսված ապրանքը՝ 10 միավոր էլեկտրական ֆունկցիոնալ մահճակալը:

Թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/89-2 պայմանագիրը ուժի մեջ է մտել 03.02.2025թ:

Սույնով տեղեկացնում եմ, որ մինչ օրս թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/89-2 պայմանագրով նախատեսված ապրանքը չի մատակարարվել Վանաձորի բժշկական կենտրոն:

ՀՀ, Երևան 0051, Կոմիտաս 49/4
49/4 Komitas str., Yerevan 0051, Armenia
Հեռ: Tel: (37410) 29-75-36; 29-75-37 Ֆաքս: Fax: (37410) 29-75-3?
Էլ. Փոստ: e-mail: info@healthpiu.am

Ուստի՝ հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃՊՁԲ-2024/89-2 պայմանագրի 2.1.7 (միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը) և 2.1.7.1 կետի բ ենթակետը (Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի)՝ առաջարկվում է միակողմանի լուծել Առողջապահության նախարարության և «Էքստրա մոթորս» ՍՊԸ միջև կնքված թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃՊՁԲ-2024/89-2 պայմանագիրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՍԵՆ ԲԱԲԱՅԱՆ

Կատարող՝ Վահան Վահանյան

ՀՀ, Երևան 0051, Կոմիտաս 49/4
49/4 Komitas str., Yerevan 0051, Armenia
Հեռ: Tel: (37410) 29-75-36; 29-75-37 Ֆաքս: Fax: (37410) 29-75-39
Էլ. Փոստ: e-mail: info@healthpiu.am